**Հայաստանի կենսաբ. հանդես, 2 (73), 2021**

# ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆՎԻՐՅԱԼԻ ԱՆՄԱՀԱՑԱԾ ԿՅԱՆՔԸ
(պրոֆեսոր Յու.Գ. Պոպովի հիշատակին)

Կյանքի 83-րդ տարում իր մահկանացուն կնքեց Երևանի պետական համալսարանի կենսաբանության ֆակուլտետի մանրէաբանության, մանրէների և բույսերի կենսատեխնոլոգիայի ամբիոնի երկարամյա վարիչ, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, վաստակաշատ մանկավարժ Յուրի Գեորգիի Պոպովը: Անխոնջ գիտնականը, շնորհիվ իր գործին անմնացորդ նվիրվածության, անսահման աշխատասիրության, շրջապատի նկատմամբ սրտացավ ու բարեկիրթ վերաբերմունքի, միշտ վայելել է ուսանողների և գործընկերների սերն ու հարգանքը: Իր ողջ էությամբ նա գիտնական էր, սկզբունքային անհատականություն և հայրենասեր մտավորական:

Յու.Գ. Պոպովը ծնվել է 1936 թ. օգոստոսի 2-ին ք. Երևանում: 1953 թ. գերազանցությամբ ավարտել է թիվ 20 միջնակարգ դպրոցը, ապա 1958 թվականին՝ գերազանցությամբ նաև մայր բուհի կենսաբանության ֆակուլտետը: Նույն տարում ընդունվել է նույն բուհի ասպիրանտուրան և միջբուհական ուսուցման շրջանակներում ուսանել և գիտական հետազոտություններ է իրականացրել Մոսկվայի մանրէաբանության ինստիտուտում ակադեմիկոս Ա.Ա. Իմշենեցկու ղեկավարությամբ, ապա շարունակել ԵՊՀ-ում՝ ակադեմիկոսներ Մ.Ա. Տեր-Կարապետյանի և Մ.Ա. Դավթյանի ղեկավարությամբ:

1961 թվականից աշխատում է ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետում՝ սկզբում որպես ասիստենտ, ապա դոցենտ: 1975 թվականին պաշտպանել է թեկնածուական, իսկ 2003-ին՝ դոկտորական ատենախոսությունները: 2006 թվականին նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

Նվիրյալ գիտնականը շուրջ 25 տարի ղեկավարել է մանրէաբանության և բույսերի կենսատեխնոլոգիայի ոլորտը համակարգող ամբիոնը, որի աշխատակազմը համալրվել է նրա բազմաթիվ աշակերտներով:

Մեծ է պրոֆեսոր Յ.Գ. Պոպովի ներդրումը հայ կենսաբանական գիտական մտքի զարգացման, Հայաստանում մանրէաբանության, բույսերի ֆիզիոլոգիայի, մանրէների և բույսերի կենսատեխնոլոգիայի բնագավառներում: Նա հեղինակ է ավելի քան 150 գիտական աշխատությունների: Յ.Գ. Պոպովի գիտական հետաքրքրությունների շրջանակը բավական լայն էր: Նրա գլխավորած գիտական խումբը ուսումնասիրում էր Հայաստանի էնդեմիկ բույսերի հակամանրէային և հակաքաղցկեղային ակտիվությունը, կաթնաթթվային բակտերիաների հակամանրէային ակտիվությունը և դրանց՝ որպես պրոբիոտիկների, կիրառման հեռանկարները, բակտերիական մելանինը՝ որպես նոր ֆիտոխթանիչ նյութ, ինչպես նաև Հայաստանում էքստրեմոֆիլ մանրէների տարածվածությունը:

Բեղուն աշխատանքային գործունեության ընթացքում արժանացել է բազմաթիվ մրցանակների և պարգևների, մասնակցել միջազգային գիտաժողովների:

Անգնահատելի է պրոֆ. Պոպովի ավանդը հայրենական գիտության և կրթության զարգացման գործում: Անմնացորդ նվիրվածությամբ կրթել է հարյուրավոր երիտասարդների, որոնք կենսաբանի իրենց մկրտությունը ստացել են՝ ունկնդրելով պրոֆեսորի բովանդակալից դասախոսությունները, իսկ մի քանի տասնյակն իրենց գիտական ուղին անցել են պրոֆեսորի անմիջական աջակցությամբ և ղեկավարությամբ: Ներկայումս նրա աշակերտներից շատերն աշխատում են տարբեր երկրների հեղինակավոր գիտահետազոտական կենտրոններում:

Մայր բուհը և իր շրջանավարտները միշտ կհիշեն անվանի գիտնականին, անսահման բարի և հմայիչ մանկավարժին:

*ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետ,*
*ԵՊՀ կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոն*